ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 նոյեմբերի 2025 թվականի N 524 - Ա

«ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻՆ, ԴԱՍՎԱՐԻՆ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐՈՎ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ կետով և համաձայն ՀՀ Սյունիքի մարզպետի 2002 թվականի հունվարի 21-ի «Սյունիքի մարզպետի խրախուսանքի ձևեր հաստատելու մասին» N 7 որոշմամբ հաստատված կարգի՝

ո ր ո շ ու մ ե մ.

«Կապանի թիվ 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հիմնադրման 100-ամյակի առթիվ, երկարամյա, նվիրյալ և արդյունավետ մանկավարժական աշխատանքի, սերունդների կրթության և դաստիարակության գործում ցուցաբերած բարձր պատասխանատվության, մասնագիտական վարպետության և մարդկային բարձր հատկանիշների համար Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի շնորհակալագրով պարգևատրել դպրոցի տնօրենին, դասվարին և գրադարանավարին՝ համաձայն հավելվածի:

Recoverable Signature

Signed by: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ.Ղուկասյան**

2025 թ. նոյեմբերի 7

ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2025թ. նոյեմբերի 7-ի
N -Ա որոշման
524

Ցանկ

«Կապանի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնադրման 100-ամյակի առթիվ ՀՀ Սյունիքի մարզպետի շնորհակալագրով խրախուսվող դպրոցի տնօրենի, դասվարի և գրադարանավարի

Շնորհակալագիր ստացողի անուն, ազգանուն	Պաշտոնը
Լուսինե Զաքարյան	Դպրոցի տնօրեն
Կարինե Հարությունյան	Դասվար
Մետաքսյա Հարությունյան	Գրադարանավար

Recoverable Signature

X

Signed by: MARTIROSYAN EDGAR 4003840615

Գլխավոր քարտուղար՝ Է. Մարտիրոսյան